


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի նոյեմբերին


(վերլուծություն)

2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 19527 գործարք, որոնց քանակը 2014 թվականի հոկտեմբերի համեմատ աճել է 0.1 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ 18.3 %-ով:

2014 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4154 օտարման գործարքների 74.8 %-ը կազմել է առուվաճառքը, 24.9 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.6 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի նոյեմբերին, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 11.0 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ 5.9 %-ով:

2014 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 60.8 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի նոյեմբերին, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 13.1 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել 3.0 %-ով:

2014 թվականի նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	նոյեմբեր 2013 թ.	նոյեմբեր 2014 թ.	հոկտեմբեր 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282600	282700	282700
Նոր Նորք	252000	252800	252800
Ավան	260000	260200	260200
Էրեբունի	250000	251000	250950
Շենգավիթ	255800	256650	256600
Դավթաշեն	275000	275200	275200
Աջափնյակ	249000	249600	249600
Մալաթիա-Սեբաստիա	242000	242500	242500
Նուբարաշեն	154000	156150	156100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2014 թվականի հոկտեմբերի համեմատ աճել են 0.02%-ով:

2014 թվականի նոյեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 337 բնակարան, որոնց քանակը, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ, նվազել է 24.1 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ 20.9 %-ով:

2014 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով,

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		նոյեմբեր 2013 թ.	նոյեմբեր 2014 թ.	հոկտեմբեր 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	115000	116000	116000
	Ապարան	57200	57550	57550
	Թալին	64900	65950	65900
Արարատ	Արտաշատ	95000	96900	96850
	Մասիս	115000	115700	115700
	Վեդի	100000	100700	100700
Արմավիր	Արարատ	75300	75500	75500
	Վաղարշապատ	154150	154150	154150
	Արմավիր	121200	121200	121200
Գեղարքունիք	Մեծամոր	87500	87500	87500
	Սևան	99150	99200	99200
	Գավառ	59800	59850	59850
	Մարտունի	107600	107700	107700
	Վարդենիս	44800	44800	44800
	Ճամբարակ	28700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55000	55000
	Տաշիր	47300	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20300
Կոտայք	Աբովյան	155100	155100	155100
	Նոր Հաճն	128600	128600	128600
	Բյուրեղավան	108150	108150	108150
	Եղվարդ	109300	109400	109400
	Հրազդան	63800	63850	63850
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	85500	85550	85550
Շիրակ	Գյումրի	109300	109300	109300
	Արթիկ	66500	66700	66700
	Մարալիկ	40700	40700	40700
Սյունիք	Գորիս	121800	122400	122400
	Կապան	92250	93100	93100
	Սիսիան	91150	91250	91250
	Մեղրի	80800	80950	80950
	Ագարակ	46850	46900	46900
	Քաջարան	94650	94700	94700
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95000	95000
	Եղեգնաձոր	124850	125550	125550
	Ջերմուկ	112500	112950	112950
Տավուշ	Դիլիջան	113150	113800	113300
	Իջևան	118300	118300	118300
	Բերդ	60200	60250	60250
	Նոյեմբերյան	49900	49900	49900
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ աճել են 0.06%-ով:

2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 493 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 161 գործարք, մարզերում՝ 332 գործարք: 2014 թվականի նոյեմբերին, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.8 %-ով, ընդ որում, Երևանում՝ 28.8 %-ով, իսկ մարզերում՝ 2.5 %-ով: 2014 թվականի նոյեմբերին 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.6 %-ով, ընդ որում, Երևանում՝ 37.6 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 2.6 %-ով:

2014 թվականի նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	նոյեմբեր 2013 թ.	նոյեմբեր 2014 թ.	հոկտեմբեր 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի հոկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		նոյեմբեր 2013 թ.	նոյեմբեր 2014 թ.	հոկտեմբեր 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Զարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100000	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի հոկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում օտարվել է 1408 միավոր (635.48 հա) հող, որից Երևանում՝ 164 միավոր (10.82 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 727 միավոր (568.14 հա), որից Երևանում՝ 12 միավոր (1.12 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 463 միավոր (43.20 հա), որից Երևանում՝ 76 միավոր (3.65 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 166 միավոր (14.09 հա), որից Երևանում՝ 71 միավոր (4.89 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 22 միավոր (3.56 հա), որից Երևանում՝ 5 միավոր (1.16 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 2 միավոր (2.99 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 27 միավոր (1.00 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (2.50 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1144 միավորի (545.85 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 140 միավոր (8.55 հա), նվիրատվության գործարքներ՝ 256 միավորի (89.29 հա), որից Երևանում՝ 24 միավոր (2.27 հա) և փոխանակության գործարքներ՝ 8 միավորի (0.34 հա):

Հանրապետությունում 2014 թվականի նոյեմբերին, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.3%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.5 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 1.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.0 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 187.25 հա, որից 178.72 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.0 %-ը կամ 274 միավորը (56.19 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 33 միավոր (1.39 հա), իսկ 75.1 %-ը կամ 859 միավորը (486.25 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 103 միավոր (6.87 հա): 2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 11 գործարք (3.41 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2014 թվականի նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	2	0.02	6	0.25	25	1.12	5	0.46	3	1.14	53	2.29	42	2.98
Արագածոտն	14	15.96	0	0.00	0	0.00	1	0.002	60	65.93	0	0.00	19	1.92	5	0.15
Արարատ	12	5.50	0	0.00	17	0.55	3	0.17	125	50.11	1	0.10	40	3.26	5	0.06
Արմավիր	1	1.28	0	0.00	0	0.00	1	0.05	117	177.44	1	0.10	54	5.86	3	0.01
Գեղարքունիք	0	0.00	1	1.00	3	0.09	8	0.70	11	21.53	0	0.00	13	1.50	1	0.01
Լոռի	4	2.54	2	0.09	13	0.18	9	0.17	28	15.99	2	0.10	7	0.61	2	0.12
Կոտայք	14	7.09	1	0.14	55	4.21	13	1.00	78	51.12	2	0.22	64	11.23	12	0.78
Շիրակ	1	0.27	1	0.03	6	0.14	0	0.00	41	47.65	1	0.22	10	1.52	1	0.01
Սյունիք	1	0.54	1	0.05	1	0.01	1	0.04	13	10.22	0	0.00	5	0.33	0	0.00
Վայոց ձոր	8	7.07	0	0.00	0	0.00	1	0.01	18	6.44	0	0.00	3	0.26	0	0.00
Տավուշ	4	1.50	0	0.00	9	0.74	8	0.23	3	2.10	0	0.00	6	0.56	5	1.94
Ընդամենը	59	41.75	8	1.33	110	6.17	70	3.49	499	448.99	10	1.88	274	29.34	76	6.06

Ստորև ներկայացված է 2014 թվականի նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	18	0.40	2	0.02	4	0.14	12	0.24	15	0.99	0	0.00	0	0.00	2	0.11	13	0.88
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	15.482	12	15.48	0	0.00	0	0.00	1	0.002
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	32	6.22	12	5.50	0	0.00	17	0.55	3	0.17
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	1.33	1	1.28	0	0.00	0	0.00	1	0.05
Գեղարքունիք	2	0.27	0	0.00	1	0.07	1	0.20	10	1.52	0	0.00	1	1.00	2	0.02	7	0.50
Լոռի	7	0.065	0	0.00	2	0.005	5	0.06	21	2.92	4	2.54	2	0.09	11	0.17	4	0.12
Կոտայք	3	0.312	0	0.00	1	0.002	2	0.31	80	12.13	14	7.09	1	0.14	54	4.21	11	0.69
Շիրակ	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	6	0.16	0	0.00	1	0.03	5	0.13	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.64	1	0.54	1	0.05	1	0.01	1	0.04
Վայոց ձոր	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	8	7.07	8	7.07	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	1	0.04	0	0.00	0	0.00	1	0.04	18	2.08	2	1.16	0	0.00	9	0.74	7	0.18
Ընդամենը	33	1.12	2	0.02	9	0.24	22	0.86	209	50.54	54	40.66	6	1.31	101	5.94	48	2.63

2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 5 գործարք (1.09 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի նոյեմբերին, 2013 թվականի նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 11.3 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 31.8 %-ով, իսկ մարզերում՝ 9.2 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 29.9 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ աճել է 60.3 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 47.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 6-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	4.90	71.0	1153.0	612.0	34	11.46	365.0	12000.0	3720.0
Ապարան	1	0.44	140.5	140.5	140.5	5	1.42	86.5	2727.3	665.0
Թալին	9	10.14	70.9	116.4	94.5	6	8.96	93.6	5494.5	750.0
Ծաղկահովիտ						15	44.10	79.5	1000.0	325.5
Արարատի մարզ										
Արտաշատ	1	0.69	115.8	115.8	115.8	69	25.88	335.1	10833.3	2568.6
Մապիս	2	1.62	367.5	417.3	392.4	15	4.37	200.0	11904.8	2984.1
Վեդի	9	3.20	30.1	12000.0	1524.9	36	17.36	207.0	10795.1	1830.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						53	28.53	294.3	9090.0	1191.1
Բաղրամյան						18	118.87	90.6	2561.1	845.5
Վաղարշապատ	1	1.28	70.3	70.3	70.3	41	26.93	444.4	11764.7	1950.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	0.52	199.8	1875.0	442.0
Ճամբարակ								60.5	953.3	355.2
Մարտունի						3	0.41	51.1	2850.0	778.0
Սևան								52.2	2134.8	328.5
Վարդենիս						5	19.97	41.2	2575.1	418.5
Լոռու մարզ										
Ալավերդի						5	2.42	170.4	6424.2	600.0
Գուգարք	3	0.23	189.1	221.5	199.9	4	0.19	234.6	6065.9	795.5
Սպիտակ						1	1.20	250.0	5555.5	705.5
Ստեփանավան						10	8.91	90.6	1686.6	358.3
Տաշիր	1	2.31	452.8	452.8	452.8	8	3.27	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	2.48	167.9	255.7	211.8	31	10.11	279.3	11942.7	4079.6
Եղվարդ	8	1.28	233.2	9750.0	1627.1	36	38.29	174.4	11971.8	2411.8
Հրազդան	4	3.33	261.1	397.6	300.4	11	2.72	130.5	10256.4	1255.3
Շիրակի մարզ										
Ախուրյան						17	18.32	252.0	1693.1	608.5
Ամասիա						1	5.82	40.9	261.0	130.0
Անի						12	14.21	110.6	546.9	432.4
Աշոցք						6	6.55	58.5	215.8	135.2
Արթիկ						5	2.75	79.4	1428.6	472.5

Սյունիքի մարզ										
Գորիս						5	5.16	92.6	1023.2	770.0
Կապան	1	0.54	1143.9	1143.9	1143.9	1	0.52	120.0	841.6	385.5
Մեղրի						2	0.39	193.0	3000.0	750.5
Սիսիան						5	4.15	46.3	1977.4	565.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	6.26	21.7	730.3	175.7	2	0.21	125.0	10000.0	1846.2
Վայք	1	0.81	215.2	215.2	215.2	16	6.23	58.8	1430.7	632.5
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.48	213.3	3783.8	690.0
Իջևան	1	0.14	805.0	805.0	805.0			267.5	9454.5	1325.5
Նոյեմբերյան	1	1.01	1356.8	1356.8	1356.8	2	1.62	46.7	7368.4	955.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի նոյեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						11	8838.0	130.7	22200.0	2585.5
Ապարան						4	6020.0	124.1	609.6	391.1
Թալին						3	3240.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	4	4366.9	235.0	536.6	393.8	12	12674.5	173.9	7140.3	904.4
Մասիս	11	658.6	794.2	5023.3	3304.8	18	11310.4	187.5	25000.0	1212.3
Վեդի	2	476.1	271.8	1496.1	884.0	10	8575.0	126.1	5000.0	663.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						18	21358.0	131.6	9090.9	1213.6
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						34	34902.0	197.4	26528.4	1531.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	3990.0	186.6	1084.3	684.3
Ճամբարակ	2	207.1	310.0	373.3	341.7			71.3	2286.2	148.1
Մարտունի						7	7084.0	119.3	5000.0	285.5
Սևան								240.0	3110.4	330.0
Վարդենիս						3	3916.6	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի						2	1350.0	114.3	1388.9	217.4
Գուգարք	11	1705.5	272.4	5204.7	2265.0	1	20.6	77.9	14083.3	1260.0
Սպիտակ						2	2440.0	104.9	1348.3	207.6
Ստեփանավան								88.2	1666.7	175.7
Տաշիր						2	2300.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	54	42058.9	351.2	5437.5	2105.9	31	21315.1	264.5	35353.5	2020.0
Եղվարդ						28	86003.0	173.6	27000.0	2870.0

Հրազդան						5	4941.0	117.7	34848.5	1323.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	1051.4	580.8	4400.0	1542.6	7	4903.6	113.6	18750.0	336.3
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						2	3875.7	67.9	180.6	190.0
Աշոցք						1	6380.0	40.8	144.0	65.0
Արթիկ	1	203.2	224.5	224.5	224.5			111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	370.0
Կապան	1	119.5	1690.1	1690.1	1690.1	3	1637.0	67.9	2638.9	335.0
Մեղրի						1	570.0	68.5	632.9	232.5
Սիսիան						1	1070.0	123.5	875.0	225.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	2620.0	96.7	7659.6	511.0
Վայք								120.7	1448.3	242.5
Տավուշի մարզ										
Բերդ						3	2745.4	75.8	810.0	123.5
Իջևան	9	7448.5	244.2	3000.0	2519.2	3	2828.8	74.1	14423.1	550.5
Նոյեմբերյան								125.0	1948.1	236.0

2014 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 640 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.3 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 71.7 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2014 թվականի նոյեմբերին, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 1.7 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ նվազել 10.6 %-ով:

2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 46 բնակարանի, 78 անհատական բնակելի տան, 273 հասարակական, 70 արտադրական նշանակության օբյեկտի, 164 հողի և 9 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 6 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի հոկտեմբերի համեմատ նվազել է 25.0 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ 33.3 %-ով: 2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 106.93 հա հողերից 0.25 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 106.69 հա հողերից 102.96 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 0.63 հա արդյունաբերական օբյեկտների, 0.40 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 19.95 հա, որից 18.94 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2025 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 10.4 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ, նվազել է 3.0 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ 7.4 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանի (52.0 %), անհատական բնակելի տան (24.7 %),

հասարակական նշանակության օբյեկտի (10.0 %) և հողի (9.0 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1185 գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ աճել է 1.5 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ 4.3 %-ով:

2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել է 181.38 հա հող, որից 17.30 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 79.6 %-ը կամ 144.40 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.11 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 93.21 հա, որից 91.92 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 137 գործարք: 2014 թվականի նոյեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ, աճել է 6.2 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 22.6 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 101 գործարք, որը 2014 թվականի հոկտեմբերի համեմատ է աճել 4.1 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 11.4 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ աճել է 12.5 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 42.9 %-ով:

2014 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1753 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2014 թվականի հոկտեմբերի համեմատ, նվազել է 10.0 %-ով, իսկ 2013 թվականի նոյեմբերի համեմատ՝ 0.2 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 9.0 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (19.9 %):

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե